

գրագրութեան տայ: Իսկ երբ հայրն շաջողի զաւակը վաճառականի մը քով գրագրութեան դնել՝ կարողի եւ կզոջայ իւր տղուն այնչափ ուսմունք սորվեցուցած ըլլալուն համար:

–Կարապետ աղա, զակիդ տեղ մը գտա՞ր:

–Չէ, ուսմունքն ալ պարապ բան է եղեր, եղբա՛յր. տղաս տասնեւվեց տարի կարդալ տուի, որ ուսումնական ըլլայ եւ վարժարանէն ելնելուն պէս վաճառականի մը քով դնեմ, որ մարդ ըլլայ: Ամեն բան գիտէ, կրակի պէս է, գրիչէն արիւն կկաթէ, բայց ի՞նչ օգուտ:

–Վաճառական մը չգտա՞ր:

–Քանի մը վաճառականներու ներկայացուցի զինքը, բայց այդ վաճառականներն ալ տգէտ ըլլալով՝ տղուս յարգը չեն ճանչնար. միւս տղաս պիտի հանեմ վարժարանէն եւ արհեստի պիտի տամ:

–Շատ լաւ կ'ընէք:

Եկեղեցւոյն միւս կողմն է աղջիկներու վարժարանն, որու վրայ ալ ժամանակաւ *Գոհարիկեան վարժարան* գրուած էր եւ վարժարանին մէջ քիչօշատ ուսում կար. իսկ հիմա *Գոհարիկեան վարժարան* անունն է ուսմունքն վերցուած են իբրեւ աւելորդ բաներ եւ միայն վաթսունի չափ աղջիկներ կ'երթան կու գան՝ իրենց կերածը մարսելու եւ քալել սորվելու համար. վերջինը կրնայ օգտակար ուսում մը համարուիլ, վասնզի շատ աղջիկներ քալելու կերպն ալ չեն գիտեր:

Թաղիս թաղականները գրեթէ բնաւ չեն փոխուիլ. մէկ կողմէ հրաժարական կու տան, միւս կողմէ հրահանգ կղրկուի Պատրիարքարանէն, հին թաղականները նորէն կ'ընտրուին եւ առօր փառօք պաշտօնի գլուխ կ'անցնին եւ կը սկսին գործել:

Վիճաբանութեան մէջ թաղականներու գործածած պաշտօնական լեզուն հետեւեալն է.

–Շուն շանորդի՛, ես քեզի չըսի՞, որ այդ գումարը հաշւոյն չանցունես:

–Փատի կտո՛ր, ինչո՞ւ պիտի չանցունեմ եղեր:

–Իրարու ինչո՞ւ անվայել խօսքեր կ'ընէք, իշու կտորներ, չէ՞ք ամչնար. մենք թաղական պիտի ըլլանք, ամեն մարդ մեզմէ բարի օրինակ պիտի առնէ... արանակի պէս կը վարուիք իրարու հետ... արջու պէս կխօսիք...:

–Հիմա հօրդ պառկած տեղէն կսկսիմ հա՛... քեզի ի՞նչ կ'ըլլայ կոր... մենք իրարու հետ հաշիւի մը վրայօք մարդու պէս կխօսինք կոր...: